ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի բնակիչներ,

Մայիսի 15-ին աշխարհը նշում է Ընտանիքի միջազգային օրը՝ ընդգծելու ընտանիքի անգնահատելի դերը մարդու և հասարակության ձևավորման ու կայացման գործում: Ընտանիքն է, որ մեզ ուժ է տալիս հաղթահարելու կյանքի փորձությունները, և հենց այստեղ ենք մենք վերադառնում՝ խաղաղություն ու մխիթարություն փնտրելով:

Մեր համայնքի ամրությունը պայմանավորված է այն ընտանիքներով, որոնք ապրում են այստեղ՝ իրենց արժեհամակարգով, բարեխղճությամբ և նվիրումով:

Մենք լավ գիտակցում ենք առողջ ընտանիքի նշանակությունը, և մեր բոլոր ծրագրերում փորձում ենք ստեղծել պայմաններ, որոնք կաջակցեն ընտանիքի զարգացմանը:

Այս օրը նաև հիանալի առիթ է մտորելու՝ ի՞նչ կարող ենք անել որպես անհատներ և որպես համայնք՝ ընտանիքի դերը բարձրացնելու և ամրապնդելու համար: Այս առիթով ցանկանում եմ սրտանց շնորհավորել բոլորիս՝ մաղթելով առողջություն, համերաշխություն և անդորր ընտանիքներին:

Թող ընտանիքներում մեծանան կրթված և արժանապատիվ սերունդներ, ովքեր կկառուցեն մեր վաղվա լուսավոր օրը:

Թող խաղաղությունը երբեք չլքի ձեր օջախները, իսկ սերը լինի ձեր կյանքի մշտական ուղեկիցը:

Շնորհավոր Ընտանիքի միջազգային օրը: